

**Դպրոցի և ընտանիքի աջակցան
ծառայություններ**

ՀԵՌԱԽՈՍ՝ (213) 241-6701
ՖԱՔՍ՝ (877) 339-2684
TTY՝ (213) 241-2511

ԷԼ ՓՈՍՏ՝ spedsfss@lausd.net
ՎԵԲ ԿԱՅՔ՝ <http://achieve.lausd.net/sped>
երկուշաբթի—ուրբաթ
7:00 —17:00
Բանավոր թարգմանչի ծառայություններ



**ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՄԻԱՑՅԱԼ
ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆ
(LAUSD)**

Հատուկ կրթության բաժին

Դպրոցի և ընտանիքի
աջակցման ծառայություններ
(SFSS)

Հեռասպասարկման



LOS ANGELES UNIFIED SCHOOL DISTRICT
**Division of
Special Education**

«ամեն դպրոց, ամեն երեխա»

Բեթ Քաուֆման, տեսուրի տեղակալ

Հատուկ կրթության բաժին

դ-ր Ահարոն Ջեֆրի, տնօրեն

Գործառնություններ—Դպրոցի և ընտանիքի
աջակցման ծառայություններ

Մեր առաքելությունը

Հատուկ կրթության բաժնի **Դպրոցի և ընտանիքի
աջակցման ծառայությունների (SFSS)** ծրագիրը
պատրաստ է համագործակցել LAUSD-ի
ընտանիքների, աշակերտների, գործակիցների և
կրթության այլ գործընկերների հետ՝ խթանելու
յուրաքանչյուր աշակերտի առաջադիմությանն
ու բարեկեցությանը ապագա անելիքների
իրագործման ճանապարհին՝ շարունակաբար
ապահովելով բոլոր գործընկերներին ճշգրիտ
տեղեկություններ, ռեսուրսներ, աջակցություն և
առաջնորդություն հատուկ կրթության
հարցերում:

Դպրոցի և ընտանիքի աջակցման
ծառայություններ
(213) 241-6701

Ինչ ենք մենք անում

Եթե հարցեր և/կամ մտահոգություններ ունեք, կապված հատուկ կրթության և մասնավորապես երեխայի անհատական ուսուցման ծրագրի հետ, մենք կօգնենք Ձեզ: Հատուկ կրթության բաժինը պարտավոր է՝

- Տրամադրել տեղեկություններ հատուկ կրթության հասկացմանը և իրազեկմանը նպաստելու համար, որպեսզի ծնողները կարողանան ավելի արդյունավետ մասնակցել իրենց երեխայի ուսումնական հարցերում որոշումներ կայացնելու գործընթացում
- Արագ արձագանքել հարցումներին և/կամ լուծել Անհատական ուսուցման ծրագրին (IEP) առնչվող խնդիրները
- Լսել ծնողների մտահոգությունները և օգնել ժամանակին լուծել դրանք
- Տեղեկացնել ծնողների ներգրավվածության հնարավորությունների մասին
- Նպաստել Շրջանի անձնակազմի և ծնողների միջև համագործակցությանը
- Պատասխանել IEP-ի վերաբերյալ հարցերին
- Հոգավ տեղափոխման կարիքները՝ համաձայն IEP-ի
- Արդի տեղեկություններ տրամադրել հատուկ կրթության մասին

Ռեսուրսներ ծնողների համար

<http://achieve.lausd.net/sped>

Հատուկ կրթության ծառայությունների ուղեցույց ծնողների համար

Այս ուղեցույցը հասանելի է առցանց՝ Հատուկ կրթության բաժնի կայքում և նախատեսված է պատասխանելու ընդհանուր հարցերի՝ կապված հատուկ կրթության գործընթացների հետ, ներառյալ հետաքննության փոխանցման ընթացակարգերը, գնահատումը, անհատական ուսուցման ծրագիրը, ծնողների իրավունքները և այլն:

Հաճախակի տրվող հարցերի պատասխաններ

Գտեք ծնողների հաճախակի տրվող հարցերի պատասխանները՝ կապված հատուկ կրթության և անհատական ուսուցման ծրագրի գործընթացի հետ:

Ներգրավվածությանը և աշակերտների առաջադիմությանը նվիրված ռեսուրսներ ծնողների համար (PRESS)

Ծնողների համար նախատեսված սեմինարների օրացույցն առաջարկվում է Շրջանի տարբեր վայրերում: Ծնողները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ՝ այցելելով Հատուկ կրթության բաժնի կայքի **FAMILIES** ներդիրը, ապա սեղմելով *Parent Workshops* պատկերակին, կամ դիմել աջակցության համար (213) 241-6701 հեռախոսահամարով:



Ռեսուրսներ ծնողների համար (շարունակություն)

Համայնքի խորհրդատվական կոմիտե (CAC)

Այս կոմիտեն Շրջանի Հատուկ կրթության տեղական պլանավորման տարածքի (SELPA) խորհրդատվական խումբ է: Կոմիտեի կազմում ներառված են ծնողներ, մասնագետներ և համայնքի անդամներ, որոնց գործունեությունն ուղղված է սահմանափակ կարողություններով աշակերտների աջակցմանը: Կոմիտեն ամենամյա հանդիպումներ է անցկացնում հետևյալ հասցեով՝

Parent and Community Services
Auditorium
1360 West Temple St.
Los Angeles, CA 90026

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարեք՝ (213) 481-3350

Հատուկ կրթության ոլորտում ծնողների և համայնքի կապերի բաժին

Տրամադրում է տեղեկություններ՝ ծնողների վերապատրաստման հնարավորությունների և համայնքի ռեսուրսների մասին:

ԼաՏանյա Տոլան, մասնագետ
Ծնողների և համայնքի կապերի բաժին
(213) 241-5445

Հաշտության համաձայնագրի համաձայն կայացված դատական վճռի փոփոխված տարբերակ (MCD) դասընթաց ծնողների համար

Դասընթացներն անցկացվում են աշնանն ու գարնանը բոլոր Տեղական շրջաններում: Դասընթացներին ծնողները ընդհանուր տեղեկություններ են ստանում հատուկ կրթության գործընթացների մասին: Ավելին իմանալու համար դիմեք SFSS (213) 241-6701 հեռախոսահամարով:

